Վ. ԱՎԱՆԵՍՈՎԻ ՀԱՄԱՏԵՂ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԼԵՆԻՆԻ ՀԵՏ

Պատմ. գիտ. դոկտոր Ս. Տ. ԱԼԻԽԱՆՅԱՆ

Վառլամ Ալեքսանդրի Ավանեսովը (Սուրեն Կարապետի Մարտիրոսյան) ծնվել է 1884 թ. սեպտեմբերի 9-ին, Կարսի մարզի Կաղզվան քաղաքում։ Մինչև 12—13 տարեկանը նա ապրել է Կաղզվանում։ Սովորել է տեղի ծխական դպրոցում։ 1896 թ. փոխադրվել է Ստավրոպոլ, ընդունվել այնտեղի արական գիմնազիան։ Սկզբում, որպես առաջադեմ աշակերտ, նրան պետական թոշակ է նշանակվում, բայց ազնվական ծագում չունենալու պատճառով շուտով զրկվում է թոշակից։ Ուսումը շարունակելու համար Ս. Մարտիրոսյանը հարկադրված դառնում է տնային ուսուցիչ, կատարում է թարգմանություններ՝ սկզբում ռուսերենից հայերեն, ապա նաև հայերենից ռուսերեն։

Տնտեսական ծանր պայմանները, սննդի պակասը, լարված ուսումը, հեղափոխական փոթորկոտ աշխատանքը խախտում են պատանի Սուրենի առողջությունը, և նա հիվանդանում է թոքախտով։

Սուրեն Մարտիրոսյանը, ինչպես հայ հեղափոխականներից շատերը, մարքսիզմին է անցել ազգայնական կուսակցությունների գաղափարական մշուշով, ապրել որոնումների ու մոլորությունների մի կարճատև շրջան։

1902—1903 թթ. սկսած Մարտիրոսյանը նետվում է ռուսական բանվորական հեղափոխական շարժման հորձանուտը և գիտակցում, որ հայ ժողովրդի ազատագրումը հնարավոր է միայն ռուսական պրոլետարիատի հաղթական հեղափոխության շնորհիվ։

1905—1907 թթ. Ս. Մարտիրոսյանը հեղափոխական ակտիվ աշխատանք է կատարում Հյուսիսային Կովկասի զորամասերում։ Ցարական խուզարկուները, նրան վտանգավոր մարդ համարելով, հետապնդում են և մի քանի անգամ ձերբակալում։ Սակայն կոնկրետ ապացույցներ չունենալով, ազատ են արձակում, բայց վերցնում հսկողության տակ։ Սուրենը հարկադրված է լինում թողնել ուսումը և հեռանալ Ռուսաստանից։ 1907 թ. սկզբին Սուրեն Մարտիրոսյանը, պարսկահպատակ Արմենակ Ալեքսանդրի Ավանեսյանցի անձնագրով մեկնում է Շվեյցարիա, որտեղ մնում է մինչև 1913 թ.։ Այդ ժամանակից էլ նրան կուսակցության մեջ ճանաչում են որպես Վառլամ Ալեքսանդրի Ավանեսով։ Չափազանց ծանր նյութական վիճակում է ապրել նա արտասահմանում։ Ուսմանը զուգընթաց ապրուստի միջոցներ հայթայթելու նպատակով ծառայել է զանազան հիմնարկներում։ Շվեյցարիայում եղած տարիներին Ավանեսովը սովորում է Ցյուրիխի համալսարանի բժշկական ֆակուլտետում, ապա Գերմանիայում։ Նա երկար ժամանակ ղեկավարում է Շվեյցարիայի Դավոս քաղաքի էմիգրանտական սոցիալ-դեմոկրատական միացյալ խմբի աշխատանքը, պատկանելով այդ խմբի ձախ թևին։

1913 թ., երբ այդ խմբի մեջ մեծամասնություն են կազմում աջ մենշևիկները, լիկվիդատորներ և այլ օպորտունիստներ, Ավանեսովը Ուրիցկու հետ հեռանում են այդ ճահճացող միջավայրից։ 1913 թ. վերջին վերադառնում է Ռու-

սաստան։ Իր հեղափոխական աշխատանքը նա կենտրոնացնում է Մոսկվայում։ Լիովին ընդունում է բոլշևիկյան տակտիկան ու ստրատեգիան պատերազմի և հեղափոխության հարցերում, ակտիվորեն մասնակցում կուսակցության ընդհատակյա աշխատանքներին։

Մինչև 1917 թ. փետրվարյան բուրժուա-դեմոկրատական հեղափոխության հաղթանակը, զանազան անունների տակ, բոլշևիկների Մոսկվայի կոմիտեի հանձնարարությամբ, Ավանեսովը աշխատում է առևտրա-արդյունաբերական ծառայողների, ցենտրոսոյուզի բանվորների և ծառայողների, տնային ծառայողների արհեստակցական միություններում։

Ավանեսովի հեղափոխական եռուն գործունեությունը սկսվում է փետրվարյան բուրժուա-դեմոկրատական հեղափոխության հաղթանակից հետո, բանվորների պատգամավորների Մոսկվայի սովետի գործադիր կոմիտեում։ Նա Մոսկվայի սովետի նախագահության անդամ էր և վճռական ու հետևողական գիծ էր վարում սովետի էսեռա-մենշևիկյան մեծամասնության դեմ։ Որպես Մոսսովետի նախագահության անդամ, Ավանեսովը ընտրվել է սովետների համառուսաստանյան I համագումարի պատգամավոր (1917 թ. հունիս)։ Սովետների II համագումարում Ավանեսովը հանդես եկավ բոլշևիկների ֆրակցիայի անունից և առաջարկեց համագումարի նախագահության կազմը։ Նա սովետների II համագումարի քարտուղարն էր։ Համագումարը Ավանեսովին ընտրեց Համառուսաստանյան կենտրոնական գործադիր կոմիտեի նախագահության անդամ և ԿԲԿ-ի քարտուղար։

Ավանեսովը մասնակցեց Պետրոգրադի ռազմա-հեղափոխական կոմիտեի այն նիստին, որ Լենինի ղեկավարությամբ մշակեց Զմեռային պալատը անվնաս գրավելու պլանը։ Որպես ԿԳԿ-ի քարտուղար Ավանեսովը մտցվեց Պետրոգրադի ռազմա-հեղափոխական կոմիտեի կազմի մեջ և եռանդուն աշխատանք կատարեց ռազմա-հեղափոխական կոմիտեի անդամներ Սվերդլովի, Պոդվոյսկու, Ուրիցկու, Ջերժինսկու և մյուսների հետ։ Ավանեսովը գործոն մասնակցություն ունեցավ սովետական իշխանության առաջին դեկրետների և որոշումների մշակման և ընդունման, հին պետական ապարատի ոչնչացման և նոր, սովետական պետական ապարատի ստեղծման գործում։ Ավանեսովը սովետական պետության կառուցողներից մեկն է։

Վ. Ավանեսովը 1918—1930 թթ. որպես պետական ականավոր գործիչ իրեն դրսևորեց բազմաթիվ ասպարեզներում և պաշտոններում, բայց ներկա հոդվածում մենք կանգ կառնենք նրա 1918—1924 թթ. գործունեության վրա, կլուսաբանենք Լենինի հետ կապված աշխատանքները։ Ավանեսովի տաղանդը փայլատակեց հենց այդ տարիներին՝ Լենինի կենդանության ժամանակ և նրա անմիջական ղեկավարությամբ։ 1918—1924 թթ. Ավանեսովը եղել է ժողովրդական կոմիսարների սովետի, Համառուսաստանյան կենտրոնական գործադիր կոմիտեի նախագահության անդամ և մինչև 1920 թ. ԿԳԿ-ի քարտուղարը, բանվորա-գյուղացիական պաշտպանության խորհրդի, աշխատանքի և պաշտպանության խորհրդի անդամ և Լենինի անմիջական տեղակալներից մեկը աշխատանքի և պաշտպանության խորհրդի նիստերը վարելիս, սովետական վերահսկողության և այնուհետև բանվորա-գյուղացիական տեսչության կոմիսարի առաջին տեղակալ, ՎՋԿ-ի կոլեգիայի, աղգությունների գործերի ժողովրդական կոմիսարիատի կոլեգիայի անդամ և հայկական գործերի կոմիսար,

պետության կյանքի համար վճռական նշանակություն ունեցող ամենաբազմազան և բազմաթիվ հանձնաժողովների նախագահ։

Վ. Ի. Լենինը, Յա. Մ. Սվերդլովը և Վ. Ա. Ավանեսովը 1918 թվականի նոյեմբերի 7-ին Մոսկվայում Կարլ Մարքսի հուշարձանի բացման պահին։

Լենինը պետական աշխատանքի մեջ էր ներքաշում ամենաակազմակերպված ու գործունյա, ամենակարգապահ ու գործիմաց հեղափոխականներին։ Նա մարդկանց այդ հատկությունները զարգացնում ու ձևավորում էր իր անձնական աշխատանքի ոճով, վարվելակերպի ու վարքագծի սեփական օրինակով։ Լենինը և Սվերդլովը, մատնանշում է Ենուկիձեն, Ավանեսովին շատ բարձր էին գնահատում, որպես կարգապահության, կազմակերպվածության, գործիմացության տիպար, այդ պատճառով էլ ամենահրատապ հանձնաժողովների ղեկավարումը նրան էին հանձնարարում։ Իլյիչը անվերապահորեն հավատում էր Ավանեսովի խոսքին։ Փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Իլյիչը իրոք պետական, տնտեսական, ռազմական շինարարության հարցերի մշակման և լուծման ժամանակ՝ Ջերժինսկու, Յուրուպայի, Կրասինի, Կուրսկու և լենինյան տիպի մյուս գործիչների հետ, Ավանեսովին մշտապես պահում էր աշխատանքի քուրայում, պայքարի առաջին գծում։

Դիմենք փաստերին և փաստաթղթերին։

Լենինը անողոք էր բյուրոկրատիզմի և քաշքշուկի ամեն մի դրսևորման նկատմամբ, աշխատում էր հրապարակով հետապնդել ու պատժել մեղավորներին։ Նման հարցերով նա հաճախ էր դիմում Ավանեսովին, նկատի ունենալով նրա պաշտոնական դիրքն ու հետևողականությունը սովետական օրինականության և խստագույն կարգապահության համար մղվող պայքարում։

1918 թ. դեկտեմբերին բանվորա-գյուղացիական պաշտպանության խորհուրդը լսում է մթերումների տեմպի ու չափի ավելացման հարցը, որտեղ

նշվում են մատակարարման ժողկոմատի աշխատանքի բազմաթիվ թերություններ։ Պաշտպանության խորհուրդը ընդունում է Լենինի կազմած որոշումը, որի վերջին կետով հանձնարարվում է Ձերժինսկուն և Ավանեսովին՝ ստեղծել հանձնաժողով ու մի շաբաթվա ընթացքում «ուժգնորեն թափ տալ» մատժողկոմատի ապարատը[1]։

Լենինն անձամբ զբաղվում էր Կաշիրայի՝ սովետական առաջին էլեկտրակայանի կառուցման խնդրով։ Կաշիրշինի ղեկավարները Լենինին զեկուցում էին շինարարության բոլոր խափանումների ու թերությունների մասին և նա իրեն հատուկ օպերատիվությամբ լուծում էր այդ հարցերը։ Ստանալով Կաշիրշինի ղեկավարության բողոքը շինարարության պարենմատակարարման մասին, Լենինը 1921 թ. սեպտեմբերի 23-ին Ավանեսովին գրում է հետևյալ նամակը. «Կից ուղարկում եմ Կաշիրշինի երեք դրություններ։ ԱՊԽ-ում գրեթե ամեն օր ստացվում են նրա բողոքները պարենմատակարարման քաշքշուկի և ընդհատումների մասին։ Կաշիրշինի շինարարների էներգիայի զգալի մասը աշխատանքի վրա գործադրելու փոխարեն կորչում է պարենամթերքներ ստանալու համար մղվող պայքարում... Առաջարկվում է Ձեզ նշանակել մի պատասխանատու աշխատող, հանձնարարել նրան շտապ պարզելու Կաշիրշինի մատակարարման ընթացքն ու կարգը և ո՞ւմ մեղքով է տեղի ունենում քաշքշուկը, պատասխանատվության ենթարկել մեղավորներին ու, եթե հարկ լինի, մշակել ԱՊԽ-ի որոշման նախագիծ Կաշիրշինի մատակարարումը կարգավորելու մասին»[2]։

Ավանեսովը այս հանձնարարության կատարման մասին անձամբ զեկուցում է Իլյիչին։

1919 թ. մայիսի 13-ին և 14-ին ժողկոմսովետի նախագահի անունով գործերի կառավարչությունում գյուղացիներից ստացվում է երկու խնդրագիր, որտեղ գանգատ կար տեղական իշխանությունների գործողությունների դեմ, իշխանություններ, որոնք, խնդրատուների կարծիքով, անարդարացի կերպով բռնագրավել էին իրենց ձիերը։ ԺԿՍ-ի գործերի կառավարչությունը այդ երկու խնդրագրերն էլ ուղարկել էր գլխավոր դաշտային շտաբին կից մոբիլիզացիոն հանձնաժողովին՝ ի քննություն։ Մոբիլիզացիոն հանձնաժողովը խնդրագրերը ուղարկել էր մայրաքաղաքի գործերի հատուկ հանձնաժողովին, որտեղից և դրանք վերադարձվել էին ԺԿՍ՝ ծրարի վրա անելով հետևյալ մակագրությունը. «Առանց այն էլ աշխատանքը շատ է. դատարկ բաներով զբաղվելու ժամանակ չկա»։ Վ. Ի. Լենինը, այս վրդովեցուցիչ պատասխանը կարդալով, գրում է. «Պետական վերահսկողություն՝ Ավանեսովին՝ այդպես պատասխանող չինովնիկին ձերբակալելու համար»[3]։ Ավանեսովը պատասխանում է, որ մեղավորները ենթարկված են պատժի։

Վ. Ի. Լենինը Ավանեսովին գրավոր և բանավոր շատ հանձնարարություններ է արել ռազմա-տնտեսական շինարարության բնագավառի տարբեր հարցերի վերաբերյալ։

1919 թ. հոկտեմբեր։ Դենիկինը Տուլայի տակ է։ Կարմիր բանակը անցնում է հարձակման։ Զենքը և ռազմամթերքը չէին բավականացնում։ Դենիկինի հա-

---

1 Տե՛ս Լենինյան ժողովածուն, հատ. XXIII, էջ 246—247։

2 Նույն տեղում, էջ 23։

3 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 36, էջ 596։

ջողությունններից լկտիացած հակահեղափոխությունը սովետական իշխանությունից թաքցնում էր ոչ միայն հացը և այլ սննդամթերքները, այլև առաջին հերթին զենքը և զինամթերքը։ Կուսակցության կենտկոմը ձեռնարկում է բոլոր միջոցները կոտրելու հակահեղափոխության դիմադրությունը և ամեն ինչ անելու Կարմիր բանակի հարձակումը կազմակերպելու համար։ Ավանեսովը, որպես բանվորա-գյուղացիական պաշտպանության խորհրդի Մոսկվայի պաշտպանության եոյակի անդամ, զբաղվում է թիկունքի կազմակերպման և ռազմաճակատի մատակարարման հարցերով։ Նա հիմնում է Մոսկվայի մոտ ռազմաճակատին պարեն և ռազմամթերք մատակարարող ԿԳԿ-ի ավտոշարասյուներ։

1919 թ. հոկտեմբերի սկզբին քաղբյուրոն ստեղծում է հանձնաժողով, որի նախագահը Լենինն էր։ Հանձնաժողովի խնդիրն էր ձեռնարկել բոլոր միջոցները հավաքելու ռազմական նպատակների համար պիտանի գույքը, թաքցրած զենքերը և զինվորական տաք հագուստը։ Որոշումը նախատեսում էր խիստ միջոցներ կիրառել նրանց նկատմամբ, ովքեր կթաքցնեն ռազմական գույքը, զենքը և հագուստը։

Հոկտեմբերի 15-ին Լենինը այդ մասին գրությամբ, որը բացի Ավանեսովից ուղղված էր նաև ուրիշների, տեղեկացնելով քաղբյուրոյի վերոհիշյալ որոշման մասին, հանձնարարում է կազմել զենք և ռազմական գույք հայտնաբերելու մասին հրամանագրի նախագիծ։

1919 թ. հոկտեմբերի 20-ին բանվորա-գյուղացիական պաշտպանության խորհուրդը հաստատում է «Ռազմական նպատակների համար պիտանի գույք հայթայթելու մասին» Ավանեսովի մտցրած հրամանագրի նախագիծը[1]։

Ժողովրդական տնտեսության միասնական պլան կազմելու հարցը Լենինի կողմից առաջ է քաշվել 1920 թ. սկզբից և ձևակերպվել կուսակցության IX համագումարի կողմից։ Ի կատարումն այդ որոշման ԺԿՍ-ի նույն թվականի հոկտեմբերի 26-ի նիստում Լենինը ելույթ է ունենում «Միասնական տնտեսական պլան կազմելու հարցում տնտեսական ժողկոմատների աշխատանքը միավորելու մասին» թեմայով և առաջարկում որոշման իր նախագիծը։ Այդ որոշմամբ նախատեսվում էր հրավիրել խորհրդակցություն՝ քննելու բոլոր ժողկոմատների միջև կազմակերպչական կապ ստեղծելու հարցը։ Տնտեսական բոլոր ժողկոմատներին առաջարկվում էր մինչև նոյեմբերի 1-ը ներկայացնել իրենց միջև գործող բոլոր կոորդինացիոն հանձնաժողովների աշխատանքի արդյունքները։ Այդ ժողկոմատների աշխատանքի միավորման հետ կապված հարցերը նախապատրաստելու համար ստեղծվում է եոյակ՝ Ավանեսովի նախագահությամբ։ Եոյակին հանձնարարվում է ուսումնասիրել վերոհիշյալ հանձնաժողովների բնույթն ու գործունեությունը և եզրակացություններ անել նրանց միավորման անհրաժեշտության մասին։ Ավանեսովի գլխավորած եոյակը նոյեմբերի 6-ին զեկուցում է ներկայացնում ԺԿՍ-ին։

Երկրի տնտեսական կյանքի կառավարման վերաբերյալ ինչպես նահանգային, գավառային գործկոմների ու ժողտնտխորհների, այնպես էլ ժողովրդական տնտեսության գերագույն խորհրդի և տնտեսական բոլոր ժողկոմատների աշխատանքի հաշվառման ու հաշվետվության հարցը Լենինի պահանջով քննարկվում է ԺԿՍ-ի և ԱՊԽ-ի մի շարք նիստերում։ Պետական հաշվառման

---

1 «Լենինյան ժողովածու», հատ. XXIV, էջ 19։

և հաշվեհսկության կարգի և ձևերի հարցի մշակման հանձնաժողովի նախագահը Ավանեսովն էր, նա էր այդ հարցերի շուրջ հանդես գալիս ԺԿՍ-ում և ԱՊԽ-ում։

1921 թ. ապրիլի 21-ին Վ. Ի. Լենինը Վ. Ա. Ավանեսովին հանձնարարել է մարզային տնտեսական խորհուրդների հետ ավելի սերտ կապ հաստատելու նպատակով ստեղծել մի հանձնաժողով, որը մշակի տնտեսական խորհուրդների նախագահների հաշվետվությունների ձևերն ու ժամկետները[5]։ Այդ առթիվ Լենինը հունիսի 5-ին Ավանեսովին գրել է.

«Ընկ. Ավանեսով։ Ես վաղը հանձնաժողովում լինել չեմ կարող։ Խնդրում եմ Ձեզ, երբ ամեն ինչ ավարտված լինի, նախքան համառուսական ԿԳԿ-ի նախագահության հաստատման ներկայացնելը (չէ որ նա է հաստատում) բնագիրն ինձ ուղարկել, որպեսզի ես անպայման հնարավորություն ունենամ մտցնելու իմ ուղղումները մինչև Համառուսաստանյան ԿԳԿ-ի կողմից հաստատվելը (ԱՊԽ-ի և ԺԿՍ-ի նակազը—նահանգական տնտեսական խորհուրդների կանոնադրությունը և այլն)»[6]։

Նույն թվականի հունիսի 27-ին Լենինը բոլոր ժողկոմներին և նրանց տեղակալներին գրել է. «Ընկ. Ավանեսովը երեկ ձեզ է ուղարկել ԱՊԽ-ի և ԺԿՍ-ի նակազի նախագիծը հաշվեհսկությունների վերաբերյալ հարցերով։ Այդ նախագիծը վերջնականապես հաստատելու է Համառուսաստանյան ԿԳԿ-ը հինգշաբթի օրը, հունիսի 30-ին։ Անհրաժեշտ է, որ չորեքշաբթի, հունիսի 29-ին, ցերեկվա ժամը 12-ին ընկ. Ավանեսովին ներկայացվեն բոլոր ուղղումները։ Յուրաքանչյուր ժողկոմ իր ժողկոմատի գծով պատասխանատու է հաշվեհսկության հարցերի մտածված և լիակատար լինելու և հարցերի խմբագրության ճշտության համար»։

1921 թ. հուլիսի սկզբին բացահայտվում է, որ ձկնարդյունաբերության գլխավոր վարչության և մատժողկոմատի միջև կոնֆլիկտ է առաջացել ենթակայության հարցում։ Ձկնարդյունաբերության գլխավոր վարչությունը ցանկանում է ենթարկվել ժողտնտխորհին, որը նրան ապահովում էր տեխնիկական միջոցներով, իսկ մատժողկոմատը, ձկնարդյունաբերությունը դիտելով որպես իր օբյեկտ, ցանկանում էր այն պահել իր տնօրինության տակ։ Այդ կոնֆլիկտը հուլիսի 4-ից մինչև 7-ը քննարկում է ՌԿ(բ)Կ կենտկոմի հանձնաժողովը։ Վեճն ընդունում է սուր բնույթ։ ԱՊՎ-ում այդ հարցի մասին զեկուցողը Ավանեսովն էր։ Կենտկոմի հանձնաժողովի եղրակացությունը ստանալով, Լենինը Սմոլյանինովին գրում է. «Կարդալ և հանձնել ԱՊԽ-ի արխիվ, իսկ ինձ հիշեցնել ԱՊԽ-ում Ավանեսովի զեկուցման ժամանակ։ ...4. Հանձնարարել ընկ. Ավանեսովին սահմանափակվել ստուգման տվյալներով, և այն նյութերով, որոնք արդեն հավաքված կամ պահանջված են ձկնարդյունաբերության վիճակի մասին, դրանք սիստեմի բերել և երկու շաբաթից հետո զեկուցել ձկնարդյունաբերությանը օգնություն ցույց տալու մասին»։ Նույն թվականի օգոստոսի 3-ին Ավանեսովի կողմից ԱՊԽ-ի հաստատմանն է ներկայացվում շահագրգռված բոլոր հիմնարկների հետ համաձայնեցված որոշման նախագիծ՝ ձկնարդյունաբերությանը ցույց տրվող օգնությունն ուժեղացնելու վերաբերյալ, որը և ստորագրվում է Լենինի կողմից[7]։

---

[5] Նույն տեղում, հատ. XX, էջ 79։
[6] Նույն տեղում, հատ. XXXV, էջ 255։
[7] Նույն տեղում, հատ. XX, էջ 290—291։

1921 թ. նոյեմբերի սկզբին կազմվում է ԱՊԽ-ի ոսկու հանձնաժողովը, որի նախագահ է նշանակվում Ավանեսովը։ Հանձնաժողովի խնդիրն էր զանազան հիմնարկների ներկայացրած ոսկու պահանջագրերի ստուգումը և այդ առթիվ ԱՊԽ-ի որոշումների մշակումը։ Ոսկու հանձնաժողովը միաժամանակ զբաղվում էր գիտատեխնիկական նպատակների համար, ոսկու, պլատինի, արծաթի և այլ ազնիվ մետաղների բացթողման հարցերով։ Ոսկու հանձնաժողովն իր նիստերը գումարում էր այն ժամանակ, երբ կառավարությանը ոսկու պահանջներ էին ներկայացնում ժողկոմատները և հիմնարկները։ Լենինը նման առիթներից մեկի մասին 1921 թ. նոյեմբերի 4-ին Ավանեսովին գրել է. «Դուք վաղը հրավիրվո՞ւմ եք ոսկու առթիվ հանձնաժողովի խորհրդակցության՝ լոմոնոսովի պատվերով։ Հարկավոր է օգտվել դրանից և մի քիչ կրճատել նրա ավտոնոմիան այն իմաստով, որ նա ԱՊԽ-ին ենթարկվի ոչ թե ուղղակի, այլ հաղորդակցության ճանապարհների ժողովրդական կոմիսարիատի (ՀՃԺԿ-ի) միջոցով (կամ ներքին գործերի ժողկոմատի—ՆԳԺԿ-ի միջոցով)»[8]։

ԺԿՍ-ի նախկին քարտուղարուհի Լ. Ա. Ֆոտիևան «Вопросы истории» ամսագրի 1957 թ. № 4-ում հուշեր է տպագրել Լենինի մասին, որտեղ խոսում է 1922 թ. դեկտեմբերի 7-ից մինչև 1923 թ. մարտի 6-ը ընկած ժամանակաշրջանում Լենինի գործունեության մասին։ Հոդվածում նշված փաստերը ցույց են տալիս, թե Լենինը որպիսի վստահությամբ ու հավատով էր վերաբերվում Ավանեսովին՝ արտաքին առևտրի պետական մենաշնորհի հաստատման, բանվորա-գյուղացիական տեսչության օրգանների վերակառուցման, սովետական պետական ապարատի աշխատանքի բարելավման միջոցառումների մշակման գործում։ Արտաքին առևտրի մենաշնորհը Լենինը դիտում էր իբրև պրոլետարիատի դիկտատուրայի հրամանատարական բարձունքներից մեկը, այդ պատճառով էլ ձգտում էր հասնել այդ հարցի սկզբունքային լուծմանը։ Բայց Կենտկոմի ոչ բոլոր անդամներն էին հասկանում այդ։ 1922 թ. հոկտեմբերի 6-ին Կենտկոմի պլենումը, Վ. Ի. Լենինի բացակայությամբ, քննարկում է արտաքին առևտրի հարցը և ընդունում կոմպրոմիսային որոշում, որը գործնականում կհանգեցներ պետական մենաշնորհի ձախողմանը։ Ծանոթանալով այդ որոշման հետ, հոկտեմբերի 13-ին Լենինը մի նամակ է գրում Ստալինին, ուր այդ որոշումը համարում է չմտածված, հապճեպորեն ընդունած, սխալ և առաջարկում է հարցը քննել իր մասնակցությամբ, ավելի նախապատրաստած։ Ֆոտիևան նկարագրում է, թե ինչպիսի խնամքով ու մանրակրկիտությամբ էր Լենինը նախապատրաստվում դեկտեմբերյան պլենումին, որը իր խնդրանոք նորից պետք է քննության առներ արտաքին առևտրի մենաշնորհի հարցը։ Ստալինին և Կենտկոմի մյուս անդամներին գրած նամակներում Վ. Ի. Լենինը բացատրում էր պլենումի ընդունած որոշման սխալները, բայց գրանցում ոչ մի ճնշում չէր գործադրում, այլ աշխատում էր ամեն կերպ նրանց համոզել իր տեսակետի ճշտության մեջ։ Այդ հարցում ևս Լենինը մեծ նշանակություն էր տալիս Ավանեսովի կարծիքին և զեկուցագրին։

1922 թ. օգոստոսի 18-ին ԺԿՍ-ի որոշմամբ Ավանեսովը նշանակվում է արտասահմանյան բոլոր առևտրական ներկայացուցչությունների ստուգող հանձնաժողովի նախագահի տեղակալ։ Նա լինում է Բեռլինում, Լոնդոնում, Փարիզում և այլուր։ Վերադառնալով, Վ. Ի. Լենինի համար պատրաստում է

---

8 Նույն տեղում, հատ. XXIII, էջ 194—195։

նյութերը, կազմում հանձնաժողովի եզրակացությունները։ Դեկտեմբերի 5-ին Ավանեսովը Լենինին գրում է. «Թանկագին Վլադիմիր Իլյիչ։ Ուղարկում եմ հանձնաժողովի եզրակացությունները կրճատված վիճակում։ Դժբախտաբար չհաջողվեց կրճատել մինչև 3 էջ։ Այդ աշխատանքը առայժմ սևագիր վիճակում է։ Կաշխատեմ այսօր կամ վաղը այն վերջնականորեն մշակել և սիստեմի բերել։ Սույնի առանձին կետերում դեռ բավարար պարզությամբ չեն շարադրված մեր դրույթները, բայց հուսով եմ, որ մեր հիմնական տեսակետները հասկանալի կլինեն Ձեզ»[9]։ Հանձնաժողովի եզրակացությունները շարադրված էին 15 էջի վրա 14 կետերով։ Դա այն փաստական նյութերից մեկն էր, որի վրա Լենինը կառուցում էր արտաքին առևտրի պետական մենաշնորհի հաստատման վերաբերյալ իր կշռադատումները։

Լենինին ներկայացված զեկուցագիրն սկսվում է հետևյալ խոսքերով. «1. Արտաքին առևտրի պետական մենաշնորհը, ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական նկատառումներով, ոչ մի պարագայում չի կարելի վերացնել, ո՛չ լիովին, ո՛չ մասնակի կերպով։ Պետական արտաքին առևտրի մենաշնորհը պետք է մեկ անգամ ևս հայտարարվի ու ամրապնդվի մի շարք նոր միջոցառումներով»[10]։ Այնուհետև զեկուցագրի մնացած 13 կետում արտասահմանի առևտրական ներկայացուցիչների նյութերի հիման վրա հիմնավորվում է արտաքին առևտրի պետական մենաշնորհի հաստատման անհրաժեշտությունը։

Լենինը կենտկոմի պլենումի համար կազմում է «Արտաքին առևտրի մենաշնորհի մասին» նամակը և ուղարկում կենտկոմի անդամների եզրակացությանը։ 1922 թ. դեկտեմբերի 14-ի ցերեկը Լենինը Ֆոտիևային հանձնարարում է հիշյալ նամակը և մի երկտող հանձնել Ավանեսովին։ Երկտողում ասված է. «Ուղարկում եմ իմ նամակը։ Ետ վերադարձրեք մինչև ժամը 7-ը։ Լավ մտածեցեք, ինչ ավելացնել, ինչ հանել, ինչպես դնել պայքարի հարցը»[11]։ Այս տողերից երևում է, թե ինչքան կարևոր էր համարում Լենինը արտաքին առևտրի պետական մենաշնորհի հաստատման վերաբերյալ սովետական պետության քաղաքականության մշակման գործում Ավանեսովի կարծիքը։

Լենինը միշտ մեծ ուշադրությամբ հաշվի էր առնում աշխատողների գիտելիքներն ու կարծիքը, պետական կարևոր նշանակություն ունեցող հարցերի լուծման, տնտեսական շինարարության և այլ բնագավառներին վերաբերող հարցերի քննարկման ժամանակ խորհրդակցում նրանց հետ, ում վերաբերում էր գործը։ Լենինը բացառիկ նշանակություն էր տալիս որոշումների մշակմանը։ Նա մերժում էր կոնկրետ ցուցումներ չպարունակող որոշումներն ու դիրեկտիվները։ Հիմնարկների և կազմակերպությունների աշխատանքի ուղղությունը ընտրելու, ճիշտ որոշումներ ընդունելու համար, ասում էր նա, պետք է կարողանալ ընդգրկել երևույթների ամբողջությունը, գնահատել դրանք։ Ճիշտ որոշում ընդունելը պրակտիկան ընդհանրացնելու կարողության արտահայտություն է։ Նա պահանջում էր, որ որոշումները լինեն հակիրճ, դրագետ ու պարզ ձևակերպված։ Իր կազմած որոշումների նախագծերը Լենինն ուղարկում էր ընկերներին և խնդրում, որ նրանք անեն իրենց դիտողությունները, ուղղումները։ Օրինակ, 1921 թ. հուլիսին Լենինը Ն. Պ. Բրյուխանովին, Ա. Մ. Լեժավային

---

9 ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 2, գ. 1, գ. 23510։
10 Նույն տեղում։
11 Նույն տեղում, գ. 29525։

և Վ. Ա. Ավանեսովին դրում է. «Խնդրում եմ այս նախագիծը դեռևս ոչ ոքի ցույց չտալ. ըստ հնարավորին այն անհապաղ շատ ուշադիր կարդալ և ղանգել ինձ կամ (եթե ինձ հեռախոսի մոտ չգտնեք) դրել ինձ երկու խոսք հենց այսօր։ Ընդունելի՞ է ձեզ համար։ Ի՞նչ ուղղումներ կցանկանայիք մտցնել (շատ կարճ)։ Ես խիստ կարևոր եմ համարում սա անցկացնել արագ և միաձայն»[12]։

* * *

1921—1923 թթ. Լենինն անխոնջ աշխատանք էր տանում սովետական պետական ապարատի բարելավման ուղղությամբ։ Այդ տարիներին Լենինը բազմակողմանիորեն մշակեց սովետական պետությունում վերահսկողության կազմակերպման հիմնական սկզբունքները։ «Ինչպես վերակազմենք բանգյուղտեսչությունը» և «Լավ է քիչ, բայց լավ» հոդվածներում Լենինը առաջադրում էր ԲԳՏ-ի վերակառուցման նոր պլան։ ԲԳՏ-ի վերակառուցման հիմնական նպատակը կուսակցական և պետական միացյալ վերահսկողության ստեղծումն էր։

Տնտեսական խորհրդակցությունների կազմակերպման ու բարելավման գործում մեծ նշանակություն տալով ԲԳՏ-ի օգնությանը, Լենինը Ավանեսովին հանձնարարում է հատուկ հրահանգավորում տալ ԲԳՏ-ի տեղական օրգաններին։ 1921 թ. հունիսի 1-ին նա գրել է.

«Լ'նկ. Ավանեսով։

Դուք պետք է շրջաբերական կազմեք բանգյուղտեսչության բոլոր տեղական օրգանների համար՝ տեղական տնտեսական խորհրդակցությունների առթիվ։

1) Պահանջել ձեզ համար բոլոր տնտեսական խորհրդակցություններում բանգյուղտեսչության բոլոր ներկայացուցիչների անձնական ցուցակ։

2) Ցուցակի յուրաքանչյուր փոփոխման մասին իսկույն ևեթ Ձեզ տեղեկացնել։

3) Պահանջել, որպեսզի կամ կոմունիստները, կամ անկուսակցականները առանձին և անձամբ երաշխավորված լինեն ըստ հուսալիության և ազնվության։

4) Նրանցից խստորեն պահանջել հաշվետվություն և առանձնապես անկուսակցականներին ներգրավելու և նրանց՝ անկուսակցականներին տնտեսական խորհուրդների աշխատանքի վերաբերյալ զեկուցումներ տալու մասին։

Այդ բոլորն անցկացնել Համառուս. կենտգործկոմի նախագահության միջոցով, որպեսզի տեղերում լսեն»[13]։

Լենինը բանվորա-գյուղացիական տեսչության ժողովրդական կոմիսարիատի կոլեգիայի անդամներին 1922 թ. օգոստոսի 21-ին նամակ է գրել ԲԳՏ-ի աշխատանքների վերակառուցման մասին։ Այնտեղ ասված է. «Ես շատ եմ ցավում, որ Ցյուրուպային չհաջողվեց աշխատել բանգյուղտեսչությունում։ (Ցյուրուպան մեկնել էր բուժման—Ս. Ա.)։ Վախենում եմ, որ աշխատանքն այնքան էլ ճիշտ չի դրված։ Աշխատանքի տիպն է՝ առանձին հետազոտումներ և զեկուցումներ։ Հին բան է։ Իսկ ապարատի վերակառուցում և նրա աշխատանքի բարելավում չկա։ Ջկան ամբողջովին կոմունիստներից կամ ամբող-

12 «Լենինյան ժողովածու», հատ. XX, էջ 107։

13 Վ. Ի. Լ ե ն ի ն, Երկեր, հատ. 35, էջ 542։

ջուլին սովետական-կուսակցական դպրոցների աշակերտներից կառուցված օրինակելի ապարատներ. չկան աշխատանքի սիստեմատիկորեն մշակված ձևրմաձեր, որ կարելի լիներ կիրառել մյուս գերատեսչությունների նկատմամբ. սիստեմատիկորեն չի չափվում այն, թե սովետական աշխատողները մեկ շաբաթվա մեջ ինչ կարող են անել այս կամ այն ճյուղում և այլն։

Ես շարունակ հույս էի տածում, որ բանգյուղտեսչության կոլեգիայի մեջ նոր աշխատողների ներհոսումը կաշխուժացնի գործը, բայց Ստալինին իմ արած հարցուփորձից այդ չկարողացա տեսնել։ Խնդրում եմ գրել ինձ, իսկ հետո, եթե հարկավոր լինի, կկազմակերպենք տեսակցություն։ Ձեր հաստիքը 8 հազար է՝ 9 հազարի փոխարեն։ Չէ՞ր կարելի արդյոք կրճատել 2000՝ 6000 ոճճիկով (այսինքն՝ ավելացնել երեք անգամ) և բարձրացնել որակավորումը։

Եթե Ավանեսովը շուտ կգա, նրան ևս ցույց տվեք»[14]։

Այս գրության հիման վրա կազմվում է ղեկուցագիր Լենինին։ Այդ ղեկուցագիրը ուղարկվում է Բևռլինում գտնվող Ավանեսովին։ Նա իր դիտողությունները ԲԳՏ-ի կոլեգիայի անդամներին, Լենինին և Ստալինին է ուղարկում 1922 թ. հոկտեմբերի 24-ին։ Դրանցում հիմնականում հավանություն տալով նախագծին, անում է մի շարք ուղղումներ և խնդրում վերակառուցումը հետաձգել մինչև իր և Յուրուպայի վերադարձը Մոսկվա։

Ժողկոմսովետի նախկին քարտուղարուհի Լ. Ա. Ֆոտիևան պատմում է, թե ինչպիսի լարվածությամբ էր Լենինը 1923 թ. հունվար-փետրվար ամիսներին աշխատում ԲԳՏ-ի վերակառուցման հարցերի վրա, իր «Ինչպես վերակազմենք բանգյուղտեսչությունը» և «Լավ է քիչ, բայց լավ» հոդվածների վրա, որոնք մի ամբողջություն են կազմում և որոնցում շարադրված են Լենինի հայացքները պրոլետարիատի պետության ապարատի աշխատանքի կազմակերպման մասին։

«Ինչպես վերակազմենք բանգյուղտեսչությունը» հոդվածը լույս է տեսնում «Պրավդայի» 1923 թ. հունվարի 23-ի համարում։ 26-ին Իլյիչը հանձնարարում է հայտնել Ա. Դ. Յուրուպային, Ա. Ի. Սվիդերսկուն և Վ. Ա. Ավանեսովին, որ եթե նրանք համաձայն են այդ հոդվածի հետ, ապա համագումարի նախօրյակին թող մի շարք խորհրդակցություններ հրավիրեն և քննարկեն այդ հարցը, պետք չէ՞, արդյոք, կազմել աշխատանքի կարգավորման դասագրքերի պլան, կոնսպեկտ։ Հունվարի 30-ին Վլադիմիր Իլյիչը հանձնարարում է Ֆոտիևային իմանալ Յուրուպա՞յից, Սվիդերսկուց և Ավանեսովից՝ համաձա՞յն են արդյոք նրանք իր հոդվածի հետ։

Չնայած առողջական ծանր վիճակին, Լենինը ԲԳՏ-ի վերակառուցման հարցը նախապատրաստեց և մտցրեց ՌԿ(բ)Կ XII համագումար, որը և հատուկ որոշում ընդունեց պետական և կուսակցական վերահսկողության օրգանների միավորման առթիվ։ Այդ մեծ գործի նախապատրաստման ամբողջ ընթացքում Լենինը մշտապես խորհրդակցում էր Ավանեսովի հետ, իսկ Ավանեսովը իր գործնական դիտողություններով, իր խելացի առաջարկություններով օգնում էր Վլադիմիր Իլյիչին։

ՌԿ(բ)Կ կենտկոմը XII համագումարի նախօրյակին Լենինի «Ինչպես վերակազմենք բանգյուղտեսչությունը» և «Լավ է քիչ, բայց լավ» աշխատություններում առաջ քաշված խնդիրների քննարկումը նախապատրաստելու հա-

14 Նույն տեղում, հատ. 36, էջ 672։

մար ստեղծվեց հանձնաժողով Ֆ. Ջերժինսկու նախագահությամբ, որի մեջ մտնում էր նաև Ավանեսովը։

Ավանեսովը կազմում է ԲԳՏ-ի խնդիրների և կառուցվածքի նախնական տարբերակը՝ Ջերժինսկուն ներկայացնելու համար։ Դա տպագրվում է «Բանվորագյուղացիական տեսչության» տեղեկագրում։ Հանձնաժողովում նախնական այդ վարիանտը քննարկելուց հետո Ավանեսովը մշակում է «Պետական ապարատը, ԲԳՏ-ի ու ԿՎՀ-ի խնդիրները (Կենտրոնական կոմիտեի հանձնաժողովի առաջարկները ԲԳՏ-ի և ԿՎՀ-ի վերակառուցման հարցերի առթիվ կուսակցության համագումարի կազմակերպչական սեկցիայի քննարկմանը ներկայացնելու համար)» նախագիծը, որը Վ. Ավանեսովի ստորագրությամբ տպագրվել է ԲԳՏ-ի տեղեկագրի 1923 թ. ապրիլի 20-ի 10—11 համարներում։ Նախագծի վերջնական տարբերակը դրվում է կազմակերպչական սեկցիայի քննարկմանը, որի մասին զեկուցում է Ֆ. Ջերժինսկին։ Սեկցիան հավանություն է տալիս դրան և աննշան փոփոխություններով փոխադրում համագումարի քննարկմանը։ Համագումարի պլենար նիստում Ջերժինսկին հաղորդում է անում սեկցիայի քննարկման առթիվ և ընթերցում նախագիծը։ Այն աննշան կրճատումներով և խմբագրությամբ հաստատվում է համագումարի կողմից[15]։

Այդ որոշման մեջ իրենց լիակատար արտացոլումն են գտել Իլյիչի բոլոր մտահղացումներն ու ցանկությունները։ Իրոք, ոչ ոք այնքան մոտիկից չգիտեր Իլյիչի պլանները ԲԳՏ-ի դերի ու խնդիրների մասին, ինչպես Ավանեսովը։ Եվ դա հասկանալի է։ Լենինը սոցիալիստական վերահսկողության հաստատման ուղղությամբ իր տիտանական աշխատանքը, սկսած 1918 թ., կատարում էր Ավանեսովի հետ խորհրդակցելով և նրա օգնությա՛ր։

Հայտնի է, որ Լենինն աշխատանքի և վարձատրման հարցերով Ավանեսովի հետ միասին զբաղվում էր մինչև իր կյանքի վերջը։ Երբ Ավանեսովը պետք է մեկներ արտասահման, Վ. Ի. Լենինը 1922 թ. սեպտեմբերի 1-ին նրան գրում է. «Ընկ. Ավանեսով։ Երեկ ես խոսեցի ընկ. Սվիդերսկու հետ և համոզվեցի, որ նա ևս կարևորագույն նշանակություն է տալիս «նորմալացման բաժնին»։ Գրականություն հավաքելը նա հանձնարարել է Երմանսկուն։ Ես մի քիչ տարակուսում եմ՝ արդյոք հաջող կկատարի՞ Երմանսկին։ Նա մենշևի՛կ է, և նրա գրքում[16] նկատելի է որոշ չարամտություն (թեև գիրքն այնուամենայնիվ լավն է)։ Խնդրում եմ Ձեզ՝ կամ ստուգել, թե ինչպես նա կկատարի հանձնարարությունը, կամ իմ ճնշերդ էլ միջոցներ ձեռք առեք այդ հանձնարարությունը կատարելու համար։

Հարկավոր է ձեռք բերել թե՛ դեմոկրատական և թե՛ ամերիկյան գրականություն։ Հավաքել այն ամենը, ինչ քիչ թե շատ արժեքավոր է, առանձնապես բյուրոկրատական աշխատանքի նորմալացման վերաբերյալ (թղթեր փոխանակելու կարգը, ձևերը, վերահսկողություն, արտատպություն մեքենայով, հարցումներ ու պատասխաններ և այլն, և այլն)։

Ըստ իս, մեզ համար այժմ ամենակարևորը Եվրոպայից և Ամերիկայից սովորելն է։ Եթե չեմ սխալվում, ես լսել եմ, որ Դուք հիանալի տիրապետում

---

15 Տե՛ս «ՍՄԿԿ-ն բանաձևերում», մասն I, էջ 919—924։

16 Խոսքը վերաբերում է Ա. Օ. Թրեմենսկու «Աշխատանքի արտադրության գիտական կազմակերպումը և Թեյլորի սիստեմը» գրքին։

եք գերմաներենին։ Եթե ոչ, գտեք թարգմանիչ։ Գուցե սկանդինավյան երկրներում ևս որևէ օգտակար բան կգտնվի։

Պետք է հավաքել ամեն ինչ և առանց հատուկ ստուգման հույսը չդնել Ֆրանսկու վրա։

Գուցե Դուք կկարողանաք Կրեստինսկու[17] միջոցով, կամ Նորվեգիայի մեր դեսպանի միջոցով ստանալ որոշ չհրապարակված նյութեր։

Ես գտնում եմ, որ մենք պետք է մշակենք թղթային աշխատանքի նորմալացումը, և ապա ամենուրեք կիրառենք այն։ Սա ամենակարևորն է։ Եթե Ձեզ կթողնեն գիտել Գերմանիայի կամ Նորվեգիայի լավագույն հիմնարկներից մեկը, արժե մեկ շաբաթ մնալ։

Գլխավորը նորմաներն են (այսինքն՝ քանի մարդ այսինչ քանակությամբ աշխատանքի համար)։ Հետո մենք մեզ մոտ կստիպենք աշխատելու նաև կենտրոնական վիճակագրական վարչության։

Խնդրում եմ Ձեզ, այս նամակը օգտագործելուց հետո, ուղարկել այն նաև Ա. Դ. Ցյուրուպային։ Քանի գեռ նա հիվանդ է, ես չեմ ուզում նրան անհանգստացնել։

Լավագույն ողջույններ։

Ձեր՝ ԼԵՆԻՆ»[18]։

Ավանեսովը արտասահմանից վերադառնալուց հետո Լենինին զեկուցում է հանձնարարության կատարման մասին, և այդ հիման վրա շատ փոփոխություններ է մտցվում աշխատանքի կազմակերպման հարցերով զբաղվող հիմնարկների գործունեության մեջ։

Ավանեսովի նախաձեռնությամբ ստեղծվում է «գործավարության վերակառուցման, պարզեցման և սիստեմատիկացման» հանձնաժողով և «հաշվառման ու հաշվետվության» գիտահետազոտական ինստիտուտ, որոնց աշխատանքը Լենինը ղեկավարում էր Ավանեսովի միջոցով։ Այդ ինստիտուտը հետագայում կոչվեց Վ. Ա. Ավանեսովի անունով։

Լենինի հետ խորհրդակցելով, Ավանեսովը մշակում է ԺԿՍ-ի որոշման նախագիծ, ըստ որի ԲԳՏ ժողկոմատի կոլեգիային կից խորհրդակցական իրավունքով ստեղծվում է աշխատանքի գիտական կազմակերպման մշտական գործող խորհուրդ։ Այս փաստաթուղթը Ավանեսովը կազմել է 1923 թ. ապրիլին, որում պարզ արտացոլված են Լենինի վերջին աշխատություններում առաջ քաշված հարցերը[19]։

1918 թ. նոյեմբերի 30-ին ստեղծվում է բանվորա-գյուղացիական պաշտպանության խորհուրդը (ԲԳՊԽ) Լենինի գլխավորությամբ։ Նա իր ձեռքումն է կենտրոնացնում երկրի քաղաքական, տնտեսական և ռազմական ամբողջ ղեկավարությունը։ Ավանեսովը ԲԳՊԽ-ի անդամ էր։ Նա ԲԳՊԽ-ում հանդես է եկել տնտեսական ու ռազմական հարցերի մասին զեկուցումներով, ղեկավարել է պաշտպանական նշանակության բազմաթիվ հանձնաժողովներ։ Այստեղ անհնար է գեթ թռուցիկ շարադրել դրանք։ Միայն ընդհանուր պատկերացում կազմելու համար թվարկենք Ավանեսովի տված զեկուցումներից կարևորները։

---

17 Ն. Ս. Կրեստինսկին այդ ժամանակ ՌՍՖՍՀ-ի դեսպանն էր Գերմանիայում։

18 Վ. Ի. Լ ե ն ի ն, Երկեր, հատ. 36, էջ 673—674։

19 Հոկտ. հեղ. կենտ. արխիվ, ֆ. 4085, ց. 1, գ. 308, թ. 27։

1919 թ. մարտի 3-ին Ավանեսովը զեկուցել է այն մասին, թե արտակարգ հանձնաժողովը ինչպես է կատարում երկրի պաշտպանությանը խանգարող հակահեղափոխական խռովությունները լիկվիդացնելու վերաբերյալ կառավարության որոշումները, ապրիլի 14-ին հաղորդում է արել շոգեքարշերի վերանորոգման ընթացքի մասին, ապրիլի 29-ին հանդես է եկել ժողտնտխորհի և մատակարարման ժողկոմատի կողմից ռազմական կարիքների բավարարման ուղղությամբ կատարվող աշխատանքները ստուգող հանձնաժողովի եզրակացություններով, մայիսի 12-ին զեկուցել է վառելիքի վիճակի մասին ՌՍՖՍՀ-ում, իսկ 13-ին՝ կազմակերպչական ադիտացիոն կետերի կազմակերպման ընթացքը երկաթուղու հանգուցային կայարաններում ու զորքերի իջեցման վայրերում, նույն նիստում հաղորդում է արել վերանորոգված շոգեքարշերի քանակի մասին, մայիսի 26-ին հաղորդում է արել սովետական ծառայողների կողմից իրենց զինվորական պարտականությունները կատարելու վերաբերյալ։ Այս հարցի առթիվ Ավանեսովը հանդես է եկել 3 նիստերում։ Մայիսի 29-ին նա զեկուցել է նահանջի դեպքում թշնամուն թողնվող երկաթուղիները ավերելու վերաբերյալ հրահանգի մասին, հունիսի 2-ին Ձերժինսկու հետ միասին հանդես է եկել բնակչությունից զենքի հավաքումը ավելի ուժեղացնելու վերաբերյալ հրահանգի նախագծով, հունիսի 13-ին երկու զեկուցում է տվել՝ Մերձմոսկովյան ածխահանքերի վիճակը ստուգող հանձնաժողովի եզրակացությունների և այդ ածխահանքերի վիճակի համար դատի ենթակա մեղավորների ցուցակը հաստատելու վերաբերյալ, 18-ին հանդես է եկել արտաքին գործերի ժողկոմատին ենթակա զինվորական ջոկատները ներքին գործերի ժողկոմատին հանձնելու վերաբերյալ որոշման նախագծով, հունիսի 26-ին՝ ռազմաճակատ մեկնող էշելոնների ուղեկցողների գործունեության, Վիլնյուսի անկման պատճառների մասին, հուլիսի 18-ին՝ սովետական հիմնարկներում տղամարդկանց կանացով փոխարինելու աշխատանքի ընթացքի մասին, նույն նիստում հաղորդում է արել հարավային ռազմաճակատի սանիտարական վիճակի մասին, օգոստոսի 22-ին՝ Ուկրաինայի փախստականների մասին, օգոստոսի 27-ին՝ պաշտպանության կենտրոնի ստուգման արդյունքների մասին. նույն նիստում՝ երկրի պաշտպանությանը մասնակցող բանվորների ընտանիքներին արձակուրդ տալու հարցի մասին։ Նույն թվականի սեպտեմբերի 12-ին Ավանեսովը և Կուրսկին զեկուցել են պաշտպանության կենտրոնի աշխատանքի բարելավման միջոցառումների և 10-րդ բանակի անօրինական գործողությունների մասին։ Նույն նիստում Ավանեսովը զեկուցել է սովետական իշխանության տրամադրության տակ գտնվող այն արժեքների մասին, որոնք օգտագործվում են ապրանքափոխանակության նպատակով։ Այստեղ նա հանդես է եկել նաև ավտոմեքենաների հաշվառման առթիվ զեկուցումով, որի նպատակն էր այնպիսի միջոցառումներ կիրառել, որոնք կանխեին ավտոմեքենաների բաշխման ժամանակ ամեն տեսակի չարաշահումները։ Միայն այդ նիստում Ավանեսովը զեկուցել է 8 հարցի մասին։

Հոկտեմբերի 17-ին Ավանեսովը զեկուցել է Մոսկվայի հիմնարկներից ավտոմեքենաները մոբիլիզացնելու և ռազմաճակատ ուղարկելու, ռազմական նշանակություն ունեցող և ռազմական կարիքների համար պիտանի գույք հայթայթելու հարցի մասին, հոկտեմբերի 31-ին մտցրել է սանիտարական ծառայության բարելավման միջոցառումների կիրառման հրամանագրի նախագիծը, դեկտեմբերի 17-ին հաղորդում է արել Պետրոգրադի էվակուացումը դա-

գարեցնելու մասին, 1920 թ. հունվարի 23-ին ղեկուցել է վագոններն առանձին հիմնարկների միջև բաշխելու վերաբերյալ, նույն նիստում՝ 1891 թ. և դրանից հետո ծնված կարմիր բանակայիններին միլիցիայում ծառայության անցնելու թույլտվություն տալու մասին, մարտի 10-ին ղեկուցումով հանդես է եկել հատուկ աշխատանքների համար մշտական բանվորական ուժ ունեցող արտելներ կազմակերպելու հարցի մասին։

Այսպիսով, ՐՍՖՍՀ-ի գոյության մեկուկես տարվա ընթացքում Ավանեսովը հանդես է եկել 82 ղեկուցումով, նախագծերով, հանձնաժողովների եզրահանգումներով, օրինագծերով։

Դենիկինի ջախջախումից հետո երկիրն անցնում էր տնտեսական շինարարության խնդիրներին, բանակի մի մասը վերածվում էր աշխատանքային բանակի։ 1920 թ. ապրիլին բանվորա-գյուղացիական պաշտպանության խորհուրդը վերակառուցվում և դառնում է աշխատանքի և պաշտպանության խորհուրդ (ԱՊԽ), որի նախագահության անգամ և փոխարինող նախագահներից մեկը Ավանեսովն էր։ ԱՊԽ-ն բաղկացած էր 3 օրգանից՝ նախագահությունից, պլենումից և կարգադրիչ նիստից։ Վերջինս քննարկում էր մանր հարցեր։ Սրա որոշումները ստորագրվում էին Լենինի կողմից։ ԱՊԽ-ի կարգադրիչ նիստերում համարյա միշտ նախագահում էին ԺԿՍ-ի նախագահի տեղակալները և հիմնականում Ավանեսովը։ Ավանեսովը հաճախ որպես ԱՊԽ-ի նախագահության անդամ նախագահում էր նաև պլենար նիստերում։ Նղել են դեպքեր, երբ նույն նիստում Լենինի հետ նախագահել է նաև Ավանեսովը կամ Լենինը նիստից բացակայել է և նիստը շարունակվել է Ավանեսովի նախագահությամբ։ Այսպես, օրինակ, 1921 թ. փետրվարի 23-ի և ապրիլի 27-ի նիստերի արձանագրության մեջ գրված է. «Նախագահներ Լենին և Ավանեսով»։ ԱՊԽ-ի պլենար և կարգադրիչ նիստերում Ավանեսովը 1920 թ. ապրիլից մինչև 1922 թ. հունիսը հանդես է եկել մոտ 250 հարցի շուրջ, հարցեր, որոնք վերաբերում էին Սովետական Հանրապետության տնտեսական և պետական շինարարությանը։

1919—1922 թթ. Ավանեսովը եղել է ԱՊԽ-ի տրանսպորտի և վառելիքի հանձնաժողովների անփոփոխ նախագահը։ Այդ ընթացքում ԺԿՍ-ում, ԲԳՊԽ-ում, ԱՊԽ-ում և ԿԳԿ-ում դրանց վերաբերյալ քննարկված հիմնական հարցերի ղեկուցողը եղել է նա։

1920 թ. հունիսի 11-ին ԱՊԽ-ի նիստում Ավանեսովը ղեկուցում է «Լեհական հարձակումից պաշտպանվելու նպատակով ձեռնարկված միջոցառումների մասին»։ ԱՊԽ-ի 1920 թ. մայիսի 28-ի որոշմամբ Ավանեսովը լեհական հարձակման կապակցությամբ նշանակվում է Սովետական Հանրապետությունում ռազմական գործերի վրա վերահսկող կոլեգիայի նախագահ։ Այդ կոլեգիայի արձանագրությունների ու փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, թե որքան արագ, համարձակ, վճռական, կոնկրետ, խստապահանջ են եղել Ավանեսովի գործողությունները և աշխատանքը։

1920 թ. հունիսի 25-ին Ավանեսովը ղեկուցել է Պետրոգրադի ավտոմեքենաները ռազմաճակատի կարիքների համար մոբիլիզացնելու մասին, հուլիսի 7-ին՝ հացի քարտերը չարամտորեն հափշտակողների նկատմամբ պատժի առավելագույն չափը կիրառելու անհրաժեշտության մասին, հուլիսի 21-ին՝ Կուրսկի նահանգում ռազմական դրություն մտցնելու որոշման նախագծի մասին, հուլիսի 23-ին՝ լեհական ռազմաճակատում աշխատող ժողկոմների վերա-

բերյալ որոշման նախագծի մասին, սեպտեմբերի 10-ին՝ կարմիր բանակի ձիերի համար կերի գնումներ կատարելու մասին, հոկտեմբերի 23-ին՝ զինվորական ծառայությունից ազատելու հարցի քննարկման կարգի մասին։

1921 թ. փետրվարի 11-ին Ավանեսովը ԱՊԽ-ի նիստում մտցրել է կարմիր բանակի զորամասերի կողմից աշխատանքային պարհակ կատարելու որոշման նախագիծը։ Այս նիստում նա հանդես է եկել 11 տարբեր հարցերի մասին զեկուցումներով, նախագծերով և առաջարկություններով։

1921 թ. փետրվարի 18-ին ԱՊԽ-ում Ավանեսովը զեկուցել է Մոսկվայում և Պետրոգրադում էլեկտրաէներգիայի ծախսումը կրճատելու, մարտի 25-ին՝ Պետրոգրադում պարենամթերքի մատակարարման վիճակի մասին, մարտի 30-ին՝ Մոսկվայի նահանգը սերմացուով ապահովելու հարցի մասին, ապրիլի 15-ին նախագիծ է մտցրել նահանգական տնտեսական խորհուրդներում ԲՏՅ ժողկոմատի ներկայացուցիչներ նշանակելու մասին, ապրիլի 27-ին՝ հանքային պարարտանյութերի արտադրությունը կազմակերպելու վերաբերյալ, մայիսի 6-ին առաջարկ է մտցնում ֆինժողկոմատի միջոցով Վրաստանին, Հայաստանին և Ադրբեջանին մեկ միլիարդ ռուբլի օգնություն տալու մասին, հունիսի 1-ին հաղորդում է անում բանակի հրամանատարական և վարչական կազմի նյութական վիճակի բարելավման վերաբերյալ ԱՊԽ-ի որոշման կատարման ընթացքի մասին, օգոստոսի 12-ին հանդես է գալիս Վ. Ի. Լենինի արձակուրդում եղած ժամանակաշրջանում ԱՊԽ-ի հանձնաժողովների որոշումների հաստատման կարգի մասին առաջարկությամբ, սեպտեմբերի 7-ին հաղորդում է անում Անդրկովկասի համար արտասահմանից պարենամթերքների գնումների ընթացքի մասին, 1922 թ. հունվարի 25-ին ընթերցում է Մյասնիկյանի հեռագիրը Հայաստանի համար սերմացուի պահանջը բավարարելու մասին և այլն։

1918 թ. սկզբից Ավանեսովը ժողովրդական կոմիսարների սովետի անդամ էր։ Ինչպես ԲԳՊԽ-ում և ԱՊԽ-ում, այնպես էլ ԺԿՍ-ում նա Լենինի հանձնարարությամբ ղեկավարում էր ամենահրատապ հանձնաժողովների աշխատանքները, ԺԿՍ-ում հանդես գալիս կարևոր նշանակություն ունեցող հարցերի մասին զեկուցումներով ու նախագծերով։

1919 թ. ապրիլից մինչև 1922 թ. ապրիլը Ավանեսովը ԺԿՍ-ի նիստերում հանդես է եկել 100-ից ավելի հարցերի շուրջ զեկուցումներով, հաղորդումներով ու նախագծերով։

1924—1930 թթ. Վ. Ա. Ավանեսովը որպես ՌՍՖՍՀ կենտրոնական գործագիր կոմիտեի նախագահության անդամ շարունակում էր ակտիվ պետական գործունեությունը։

1924—1925 թթ. նա զբաղեցնում էր արտաքին առևտրի ժողովրդական կոմիսարի առաջին տեղակալի պոստը, իսկ 1925 թ. նոյեմբերից մինչև մահր աշխատում էր որպես ժողովրդական տնտեսության գերագույն խորհրդի նախագահության անդամ և ռազմական արդյունաբերության վարչության ղեկավար։ «Ավանեսովը միաժամանակ գլխավորել է ռազմական արդյունաբերությունը։ Ռազմական արդյունաբերության առողջացման այն գիծը, որ անհողդողդ կերպով վարում էր նա, կազմում է ևս նրա մի մեծ ծառայությունը կարմիր բանակի հանդեպ»,— գրել է Կ. Ե. Վորոշիլովը։

* * *

Դեռ 1903 թ. թոքախտով տառապող Վ. Ավանեսովը պետական շինարարության ծով աշխատանքում, ժամանակակիցների վկայությամբ, ուղղակի այրվում էր «Նա ապրում էր աշխատանքի համար,— գրում էր Ենուկիձեն,— և ցանկանում էր ապրել միայն դրա համար։ Նա մահից չէր վախենում։ Չկար այնպիսի մի վտանգ, որի դեմ առաջինը նա չնետվեր»։ Սովետական կառավարությունը, անձամբ Վ. Ի. Լենինը ձեռնարկում էին բոլոր միջոցները Ավանեսովի բուժման համար, բայց նա, ինչպես գրում է Ենուկիձեն, աշխատանքից չկտրվելու համար հրաժարվում էր երկար ժամանակով բուժման գնալ։

1918 թ. աշնանը Վ. Ի. Լենինը ՌՍՖՍՀ-ի առողջապահության ժողկոմ Սեմաշկոյին գրել է հետևյալ երկտողը. «Ինձ հայտնում են, որ Ավանեսովը, լինելով բոլորովին վատ վիճակում, բռնադատում է իրեն։ Չէ որ թոքերից մեկը չկա (?) և այլն։ Խնդրում եմ Ձեզ նշանակել միանգամայն վստահելի պրոֆեսորներ և հանձնարարել նրանց տալ գրավոր կարծիք (թե՛ դիագնոզը, թե՛ բուժումը)»[20]։

Հետագա տարիներին Վ. Ի. Լենինը մշտապես հետևում էր Ավանեսովի բուժմանը։ 1922 թ. սկզբին Ավանեսովի հիվանդությունը կրկին սուր բնույթ է ստանում։ Որոշվում է նրան անհապաղ ուղարկել արտասահման։ Այդ առթիվ Լենինը հեռագրում է Ռիգայի սովետական դեսպանին. «Բոլոր ջանքերը թափեցեք, որպեսզի անհապաղ վիզա ստանաք ընկ. Ավանեսովի՝ ԲԳՏ ժողկոմի տեղակալի համար։ Ժամանած գերմանացի բժիշկները գտել են, որ նա վտանգավոր հիվանդ է։ Գարունը նրա համար առանձնապես վտանգավոր է։ Նրան պետք է անհապաղ մեկնել։ Բոլոր ուժերը լարեցեք։ Բոլոր երաշխիքները տալիս ենք։ Անհապաղ պատասխանեցեք։ Լենին»[21]։

Նույն տարվա սեպտեմբերին ԺԿՍ-ի մի նիստի ժամանակ Լենինը Ավանեսովին գրում է հետևյալ երկտողը. «Իսկ Դուք իրոք մեկնո՞ւմ եք։ Ե՞րբ, թե՞ կրկին ձախողելու եք։ Ձե՞ք ուզում բուժվել»[22]։

1928 թ. Ավանեսովի առողջական վիճակը ծանրանում է։ Նրան հարկադրում են մեկնել արտասահման բուժվելու։ Վերադառնալով բուժումից, նա կրկին խրվում է աշխատանքի մեջ։ Սովետական պետության ռազմական արդյունաբերության զարգացման հարցը հանգիստ չի տալիս նրան։ Կրկին հիվանդանում է։ 1930 թ. փետրվարի 8-ին ելույթ է ունենում սովետների համագումարում և նույն օրը ընկնելով անկողին, մարտի 16-ին, 46 տարեկան հասակում վախճանվում է։

---

20 «Լենինյան ժողովածու», հատ. XXII, էջ 332։
21 Նույն տեղում, հատ. XXXVI, էջ 335։
22 Նույն տեղում, հատ. XXXV, էջ 335։